«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Էպոսի դերը հայրենասիրության ազգային արժեհամակարգի ձևավորման գործում*

Առարկան՝ *հայոց լեզու և գրականություն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Ալիսա Մաթևոսյան*

Ուսումնական հաստատություն՝ *Արարատի մարզի Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոց*

Երևան 2022

ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային էպոսներն ամեն ժողովրդի երազանքներն արտահայտող գրական հուշարձաններ են, որոնք ուղեկցում են ազգի հետագա ընթացքին՝ հիշեցնելով, թե ինչ է դնում «հայրենիք» սրբազան հասկացության մեջ տվյալ ժողովուրդը:

Աբադիան սալիկ, որի վրա հատված է Գիլգամեշի էպոսից:

Մի քանի խոսք «Սասնա ծռեր» էպոսի ժամանակագրության մասին, որը նույնպես գալիս է ապացուցելու հայերիս հեռավոր անցյալի իրականությունն ու ստեղծած պատ-մամշակութային արժեքների ենթադրություն (հիպոթեզ) չլինելու խնդիրը: Մեր նախնի-ներն իրենց մտքի բանավոր քարեդարաններում սերնդեսերունդ փոխանցել են մեր ժո-ղովրդական հեքիաթները, խաղիկները, առածները, մեր անուններն ու բառերը: Նրանցից յուրաքանչյուրն իր մեջ կրում է պատմական անցյալի ներկայությունը: «Սասնա ծռեր» է-պոսի 150 պատումներից մեր ժամանակի ընթերցողին հասած «Ասունցի Դավիթ» էպոսը դեռ մինչև օրս էլ շարունակում է մնալ որպես դյուցազներգություն: Թեև էպոսը կապվում է 8-10 դարերի հետ, բայց նրա հերոսները, դեպքերը, երևույթները մեզ այլ բան են հուշում: Ամերիկաբնակ գիտնական Արթուր Արմինի 2007թ. Լոս Անջելեսում հրատարակած «Հնա-գույն հեթանոսական Աստվածաշունչ Սասնա ծռեր էպոսը» լույս է սփռում տիեզերական իմացության բոլոր շերտերի վրա շաղկապված եգիպտական, հունական, ասորական և հայկական աստվածությունների ժառանգական շղթային: Գրքի հեղինակի բացառիկ աշ-խատանքը շերտ առ շերտ էպոսի հերոսների միջոցով մեզ է հասցնում մոտ 40 000 տարվա հայ էթնոսի գոյության փաստը: Նրանից է սկսվում մարդկության տիեզերաիմացությունը:

Բերենք մի քանի օրինակ՝ պարզվում է, որ Ծովինարը (Նար-ծովի-մայր, ծովի ոգի) իգական հիմքով ջրային տարերքն է և կապվում է ծովի հետ, այսինքն տիեզերական կամ երկնային կենսաջրերի հետ, որպես արարման սկիզբ, ինչպես բոլոր հնդեվրոպական հավատամքային պատումներում (էջ 252): Եվ այսպես հերթով հեղինակը ցույց է տալիս հերոսների շատ խոր անցյալի հետ կապը: Ինչևէ, էպոսը դեռ լի-արժեք ուսումնասիրված չէ: Եվ սա է պատճառը, որ չի կորցնում իր հետաքրքրությունը: Եվ որպես հավելում նշենք, որ 2012 թվականի դեկտեմբերի 5-ին «Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսը» ընդգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

Հայկական էպոսը ժողովրդական իմաստաբանության, նպատակի, հոգեբանական, բարոյական նկարագրի կուռ և ամբողջական արտահայտությունն է: Այն անցել է դարերի միջով, ավանդվել է սերնդեսերունդ բանավոր, ավելի ուշ՝ նաև գրավոր տարբերակներով և դարձել հայ ժողովրդի հոգևոր մշակույթի անբաժանելի մասնիկը: Գաղափարական խորքայնությունն և բազմաբովանդակությունը, արծարծված համամարդկային խնդիրները դարձել են այն հենակետերը, որոնց շնորհիվ էպոսը դուրս է եկել ազգային արժեքների շրջանակից և ներառվել է համաշխարհային գրականության մեջ: Աշխարհի տարբեր լեզուներով կատարված թարգմանությունների, ինչպես նաև հայ և օտարազգի գործիչների կողմից տրված գնահատականների շնորհիվ հայոց դյուցազներգությունը դարձել է օտար ազգերի հոգևորգրական մշակույթի մի մասնիկը: Թարգմանությունների շնորհիվ մեր էպոսը դարձել է միջազգային գրական հանրության սեփականությունը:

Ըստ Ֆրեդերիկ Ֆեյդիի «Սասնա ծռեր»-ը իր խաղաղասիրական ու դեմոկրատական գաղափարախոսությամբ անզուգական է:

Մեր ազգային էպոսի գաղափարախոսությունը երբեք հնացող չէ, որովհետև այն մարդուց պահանջում է սիրել հայրենիքը, լինել աշխատասեր ու մարդասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, չենթարկվել բռնակալ ուժին, ունենալ անկախ հայրենիք և ամենակարևորը՝ խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ:

«Մի՞թե հավերժորեն ճշմարիտ չէ, որ ժողովուրդները պետք է ապրեն խաղաղության և բարեկեցության մեջ»[1],- գրում է պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը: Այո՛, յուրաքանչյուր ժողովուրդ երազում է խաղաղության մասին, բայց քչերին է տրված այդ խաղաղության համար պայքարել և առավել քչերը կարող են դիմանալ այդ պայքարում:

Դարեր շարունակ հայ ժողովրդի ստեղծագործ միտքն ուղղված է եղել մի լուսավոր ու պայծառ նպատակի՝ փշրել, ոչնչացնել օտար բռնակալների արյունոտ սուրը, որ հար-

յուրամյակներ անընդհատ կախված է եղել նրա գլխին՝ խլելով նրանից ազատ ու երջանիկ կյանքը, արևի լույսը: Դարեր շարունակ նա երազել է և ստեղծել իր հարազատ, խիզախ, ազնիվ ու անձնուրաց հերոսը, որը պետք է ծնվեր հենց իր, ժողովրդի իմաստությամբ լի արգանդից և, շողացնելով թուր կայծակին, խփեր, փշրեր ու ոչնչացներ այն տիրապետությունը, որը զրկում էր հայ ժողովրդին ազատությունից, ինքնուրույն գոյության իրավունքից: Եվ ժողովուրդը ստեղծեց իր հերոսին: Տաղանդավոր հայ ժողովուրդը իր գուսաննեերի, իր քրտնաջան զավակների բերանով հյուսեց իր մտքերի, ձգտումների, դարավոր տենչերի ու իղձերի, փայփայած գաղափարների ոսկե գիրքը: Նա՝ պոեզիայի այդ սքանչելի մարգարիտը, չի գրվել մագաղաթի վրա միջնադարյան հայ պատմիչների կողմից, նա ազնվական իշխանի գրչի ստեղծագործությունը չէ, այն ստեղծել է ժողովուրդը: Պարզ, հասարակ, ռամիկ ժողովուրդը, որը նրա մեջ դրել է իր ազատագրության ձգտումները, ժողովրդի հավաքական հզորության ու նրա անհաղթելի ուժի վսեմ գաղափարները: Նա այդ ոսկեբառ գրքի մեջ դրեց իր պայծառ երևակայությամբ օժտված հերոսներին՝ դյուցազուն Սանասարին, Մեծ Մհերին, Դավիթին ու Փոքր Մհերին, իսկ այդ հերոսների մեջ ամփոփեց իր դարավոր իմաստությունը, իր ազնվությունը, ճշմարտասիրությունը, եղբայրասիրությունը, մեծահոգությունը, աշխատանքային ստեղծագործ ոգին. հատկություններ, որոնք անհաղթ են դարձնում հերոսին:

Հանուն մարդկության բարեկեցության և երջանիկ ապագայի էպոսի վերջին ճյուղի հերոսը՝ Փոքր Մհերը, փակվում է Ազռավաքարում:

Մհերի դուռ. Վանա բերդի մոտ

[1]«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ (Հոդվածների ժողովածու՝ նվիրված համահավաք բնագրի հրատարակման 80-ամյակին) Երևան – 2019

ՄԵՐ ԷՊՈՍՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Սասունցի Դաւիթ, Հակոբ Կոջոյան
Հայաստանի ազգային պատկերասրահ

«Սասունցի Դավիթը» իր գաղափարի և
փիլիսոփայական թռիչքի բարձրությամբ,
իր դիապազոնով, մի խոսքով, իր էությամբ
ոչ թե հայ ժողովրդի պատմության մի էպիզոդն է,
այլ հայ ժողովրդի ողջ պատմությունը:

Դերենիկ Դեմիրճյան

Ազգային ի՞նչ արժեքներ է ձևավորվում «Սասնա ծռեր» էպոսը:

Արդյոք չի՞ կորցրել իր արդիականությունը:

Կհետաքրքրի՞ այն այսօրվա պատանուն:

Ցանկացած թեմայի հետաքրքիր լինելը կախված է ներկայացնելու ձևից: Հմուտ ուսուցիչը գիտի մոտեցման ձևերը, այսրվա սերունդի հետաքրքրության սահմանները, թուլություն-ները, առավելությունները և, ըստ այդմ էլ, կազմում է իր խոսք նախաբանը: Նախաբանից էլ կախված է թեմայի հաջողությունը:

Էպոսը ներկայացնելիս ուսուցչի աչքերը անթաքույց պետք է բոցկլտան: Աշակերտը պետք է զգա ուսուցչի ներքին բավարարվածությունը…

Հիմա անդրադառնանք բուն նյութին: Նախ նշենք, որ մեր էպոսն ունի հարուստ գաղափա-րական բովանդակություն, որը կարելի է բաժանել մի քանի հիմնական կետերի.

1. **Հայրենասիրություն՝** պայքար արտաքին նվաճողների դեմ:
2. **Ազատասիրություն՝** ժողովրդի պայքարը ներքին հարստահարիչների դեմ:
3. **Աշխատասիրություն՝** աշխատանքի և աշխատավոր մարդու փառաբանումը:
4. **Մարդասիրություն- ժողովրդասիրություն՝** տարբեր ժողովուրդների բարեկամության գովերգում:
5. **Ասպետականություն- վեհանձնություն՝** հերոսների մեծահոգության դրսևորում անգամ թշնամու հանդեպ:
6. **Ազնվություն և ճշմարտասիրություն՝** ամեն ինչից վեր դասել ազնվությունը:
7. **Երգիծանքը՝** որպես ինքնաքննադատության հիանալի միջոց, որպես փրկօղակ պատմական սարսափելի դրվագներից:

Շարքը կարելի է անվերջ թվարկել՝ իմաստություն, քնարականություն, կնոջ դերը (դեռ էն գլխից…)….

Ծովինար, Սանասար և Բաղտասար,
Վեհիկ Տեր-Գրիգորյան
Հայաստանի Ազգային Պատկերասրահ

1. Հայրենասիրությունը

Հայրենասիրությունը մեր էպոսում կա սկզբից մինչև վերջ: Հայրենասիրության 1-ին օրինակը տալիս է Ծովինարը, որը գիտակցաբար դիմում է անձնազոհության.

…Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն.
Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսըվիմ,
Ջանց մեր Հայաստան էրկիր ավերի,
Էն հազար հազար հոգիք կորուսանին…

Հայրենասիրության այս բարձր դրսևորումը հետագայում փոխանցվում է էպոսի մյուս հերոսներն, որոնք սերվում են Ծովինարից: Նախ՝ Սանասարը և Բաղդասարը կառուցում են Սասունը՝ հզորացնելով հայրենիքը, ապա սպանելով խալիֆին ՝ ազատում են մորը՝ մայրիշխանությանը և վերադարձնում Հայաստան:
Մյուս կերպարը՝ Մեծ Մհերը կառուցում է Մարութա վանքը, Որսասարը: Մհերի հայրենասիրությունը երևում է նաև այն դրվագում, երբ թմբիրից դուրս եկած, սթափ ժամանակ վերջապես լսում է Իսմիլ խաթունի խոսքերը ուղղված որդուն՝ Հայաստանը խվարեցնելու հետ կապված: Արմաղանի հայրենասիրությունը, երբ հանուն Սասնա օջախի շենության մի կողմ է դնում անձնական վիրավորանքը, ամուսնու դավաճանությունը և «երդմնակոտոր» լինում:
Ամենահայրենասիրական կերպարը III ճյուղի հերոսն է՝ Սասունցի Դավիթը: Դավիթը պատրաստ է իր անձը զոհել հանուն հայրենիքի. նա մենակ գնում է Մելիքի ահռելի բանակի դեմ և ազատում Սասունը: Նա հարկատուներին ծեծելով դուրս է վռնդում և հարկ չի տալիս:
Փոքր Մհերը Մատնավանքում դուրս է գալիս դավաճան վանականի կանչած թշնամիների դեմ, վերականգնում է Մարութա վանքը, Գանձասարը, Որսասարը, հոր վրեժն է առնում Չմշկիկ սուլթանից:

Վեհիկ Տեր-Գրիգորյան

2 Ազատասիրությունը

Հայի ազատասիրությունը սկսում է դեռ Հայկ նահապետից: Նա է ժառանգել մեզ գլուխ չխոնարհել օտար զավթիչների առաջ. կամ՝ մահ, կամ՝ ազատություն: Ու այդ անհիշելի ժամանակներից հայի գլխավերևում Դամոկլյան սուրի պես կախվել է ստրկանալու և ձուլվելու վտանգը: Իհարկե, հանուն արդարության պիտի նշենք, որ շատ ժողովուրդներ են պայքարել հանուն ազատության, բայց հայը գերազանցել է բոլորին իր «հարուստ» փորձով: Հիմա հերթը արաբինն էր, որ պիտի գար մեծ ախորժակով գրավելու, ավիրելու, ստրկացնելու:

Էպոսում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ էր զոհել իր կյանքը, և ի հավելումն այդ գաղափարի՝ սրբազան է համարվում որևէ ժողովրդի՝ հանուն իր ազգային ազատության ու անկախության նվաճողների դեմ ուղղված պատերազմը:

Էպոսի հերոսները ճյուղ առ ճյուղ պայքարում են այդ ազատության համար: Նրանք բոլորն էլ գիտակցում են ազատության կարևորության մասին և ամեն գնով՝ թեկուզ մենակ մի ողջ բանակի դեմ ելնելով, գնում են դեպի բաղձալի ազատությունը կերտելու, ստանալու, նվաճելու: Նրանք հենց այն գլխից գիտեն՝ ազատությունը նվեր չեն ստանում, այլ ձեռք են բերում պայքարելով, նույնիսկ՝ արյան գնով, եթե պետք է դա:



Վեհիկ Տեր-Գրիգորյան

3 Աշխատասիրությունը

Ժողովուրդը պիտի ունենա իր արդար աշխատանքի արդյունքը: Նա երազում է, որ լինի լիություն, բարեկեցություն, որ ցորենը դառնա մասուրի չափ, իսկ գարին՝ ընկույզի: Էպոսի տարբեր հատվածներում հանդիպում ենք «աշխատանքը ամենազոր է» խոսքերին (բերդաշինություն, եկեղեցաշինություն, հողագործություն և այլն): Շատ են այն դրվագները, որ փոքրիկ դյուցազունները ծավալում են աշխատանքային գործունեություն և դրանով թեթևացնում ժողովրդի հոգսը (Դավիթն այնքան վար է անում, որ ժողովուրդը պետք է աներ մի քանի օրում…):
Յուրաքանչյուր հերոս իր աշխատանքով ապացուցում է հայ ժողովրդի ստեղծարար բնույթը: Քանդված եկեղեցու վերաշինումը ապացույցն է հայի չնահանջող, չկոտրվող հավատի: Քանի դար է հայը վերաշինում է իր եկեղեցիները, վանքերը, տաճարները, տները, ՀԱՎԱՏԸ: Հավատը վաղվա լավ օրվա և բարու հաղթանակի: Իսկ դրա համար միայն հավատալը քիչ է, պետք է աշխատել, անդուլ- անդադար, աշխատել՝ ի տրիտուր թշնամիների վայրագության: Մի օր նրանք կհոգնեն, բայց հայի հավատը, աշխատանքի նկատմամբ մեծ սերը՝ երբեք:

Սասնա բերդ, Ծովասար

Աստվածածին վանքը, Մարաթուկ լեռ

4 Մարդասիրությունը

Էպոսի գլխավոր նպատակներից մեկն էլ մարդասիրության դաստիարակումն է: Առաջին ճյուղում արդեն Սասունում հաստատված Սանասարն ու Բաղդասարը սկսում են կառուցել իրենց բերդը: Բայց սկզբում կացարաններ են պատրաստում աշխատավոր մարդկանց համար: Այդ քայլի նպատակը մարդասիրական է.
Բաղդասար պատասխանեց.

-Առաջ շինենք զէդոնց տներ,
Ու նոր շինենք զմեր բերդ.
Էդ խեղճ մարդեր չեն կարնա
Արևուն առջև կենա:
Ու սկսեցին զտներ[1]:

Մարդկանց վարքը բարոյապես արժևորելը, նրանց արարքները բարոյականության համամարդկային չափանիշներով և բարոյական հասկացություններով իմաստավորելն ու գնահատելը ենթադրում են մարդասիրության բարձր մակարդակ, մի վարքագիծ, դիրքորոշում, որը վկայում է հայ ժողովրդի քաղաքակրթվածության, բարոյապաշտության, արդարամտության, միամտության, ազնվության և, միաժամանակ, այսպես կոչված ‹‹կյանքի դաժան օրենքները›› չհասկանալու մասին: Գո՞ւցե իրականության բարոյական արժևորման գերակայությունը վկայում է տվյալ ժողովրդի ոչ միայն մարդասիրության, բարության, խաղաղասիրության, այլև առաջին հերթին թուլության, տկարության, խեղճության ու անճարության մասին: : Նիցշեից եկող այն միտքը, թե բարոյականությունը (գերմանացի մտածողը նկատի ուներ քրիստոնեականը) ստեղծել են թույլերը, ստրուկները՝ վրեժ լուծելու ուժեղներից, իրենց տերերից, հայկական էպոսի նկատմամբ կիրառելի չէ այն առումով, որ այստեղ բարոյականության պաշտպանները, բարոյական բարձր արժեքների մարմնավորողները հերոս-դյուցազուններ են, ովքեր այնքան ուժեղ են, որ ի զորու են կատարելու անհավատալի մեծագործություններ ու սխրանքներ և իրենց կամքը պարտադրելու թե՛ բարոյապես և թե՛ ֆիզիկապես պարտվածներին: :

Այսինքն՝ նրանք թուլությունից, խեղճությունից դրդված չեն կատարում բարոյական արարքներ, այլ դա իրենց ապրելակերպն է, կենսաոճը, մարդկանց, հատկապես ուրիշների հանդեպ վերաբերմունքի կերպը: Սակայն էպոսի հերոսների բարոյական արարքները եթե դիտարկում ենք ‹‹կյանքի օրենքների›› տեսանկյունից, ապա տեսնում ենք, որ դրանք հակասում են ազգամիջյան համակեցության, քաղաքականության մեջ գործող իրական կանոններին, ողջախոհության պահանջներին ու ազգային շահերին:

[1] **‹‹Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս››, էջ 34:**

5 Ասպետականություն- վեհանձնությունը Բարոյական արժեքներ

էպոսի հերոսների բարոյական արարքները եթե դիտարկում ենք «կյանքի օրենքների» տեսանկյունից, ապա տեսնում ենք, որ դրանք հակասում են ազգամիջյան համակեցության, քաղաքականության մեջ գործող իրական կանոններին, ողջախոհության պահանջներին ու ազգային շահերին: Հայկական էպոսի հերոսները «ծուռ» են, այսինքն՝ խենթ են, խենթավուն, միամիտ և, բնականաբար, նրանց անսովոր արարքները ծիծաղ, զարմանք են առաջացնում, քանի որ չեն տեղավորվում ողջախոհության և ուժի իրավունքի վրա խարբսխված բարոյականության շրջանակներում: էպոսում բազմաթիվ են այն օրինակները, երբ բախվում են երկու անհաշտ բարոյական համակարգեր: Այսպես, Մեծ Մհերը Մըսրա Մելիքի մահվանից հետո նամակ է ստանում նրա կնոջից՝ Իսմիլ խաթունից, որում վերջինս Մհերին խնդրում է այցելել Մըսր: Հարազատները հորդորում են Մհերին չգնալ՝ բերելով հետևյալ փաստարկները. Իսմիլը խորամանկ է, «մեր դուշմանի կնիկն է», ուզում է Մհերից զավակ ունենալ, մինչդեռ Սասունում մնալու դեպքում գուցե Աստված Մհերին զավակ տա: Զարմանալի է, որ Սասունի իշխաններն ու վարդապետները նրան խորհուրդ են տալիս գնալ՝ «էտա հազըր տեղ է, շուտ գնա …Մըսր տիրապետի» (կարծում եմ՝ դա պարզապես քաղքենիական ցանկության արտահայտություն է): Մհերի գիտակցության մեջ իրականության բարոյական ընկալումը կլանում է մյուս բոլոր ընկալումները, տեղ չի թողնում որևէ, տվյալ դեպքում՝ քաղաքական, ազգային մտածումների համար, և նա մեկնում է Մըսր: Մհերը ուխտադրուժ չէ. ըստ Մըսրա Մելիքի հետ կապած պայմանի և հնուց եկող սովորույթի՝ նա իրավունք ունի տիրություն անելու Մըսրին, այդ թվում՝ նրա կնոջը: Այս վերջին հանգամանքն անընդունելի էր բարոյական այլ ավանդույթով դաստիարակված Մհերի համար: Սակայն իր երկրի ու ժողովրդի շահը բնազդորեն զգացող Իսմիլ խաթունը կարողանում է գայթակղել բարոյապաշտ, ավանդապաշտ և գինուց խելքահանված Մհերին: Իսմիլ խաթունը բնավ վավաշոտ կին չէ. նրա նպատակը ամեն գնով դյուցազն Մհերից որդի՝ իր տերությունը պահող թագաժառանգ ունենալն է. **«Զա՛նըմ, ինձի մա՛րդ մի հարկավոր է՝ // Որ էրկրին տիրություն անի, // Մեր իշխաններ խաղաղեցու»**[1]: Մհերի «չգիտակցված դավաճանության» կամ ենթագիտակցության ստորին խորքերում ապրելու պատճառով ծնվում է արու զավակ՝ Փոքր Մըսրա Մելիքը, ով, ըստ Իսմիլ խաթունի, պետք է հայի ճրագը հանգցներ, հայի օջախ փչացներ և Մըսրա ճրագը վառեր, Մըսրա օջախ կանգնեցներ: Մհերը, լսելով, թե ինչ խրատ է տալիս Իսմիլ խաթունը իր զավակին, ուշքի է գալիս ու յոթ տարվա բացակայությունից հետո վերադառնում Սասուն: Միամիտ, ծուռ Մհերը խիստ զարմանում է, որ Իսմիլ խաթունը դեռ ձվից դուրս չեկած տղային սովորեցնում է չարություն գործելու, ուրիշի ճրագը հանգցնելու, ամբողջ աշխարհը զավթելու արվեստը: Ահա կյանքի բարոյական արժևորման չարաշահման հետևանքներից մեկը. սեփական ուժերով թշնամի աճեցնելը: Մըսրա Մելիքը, մեծանալով ու հավատարիմ մնալով իր մորական ցեղի բարոյականությանը, իր հոր՝ սասունցի Մհերի մահվանից հետո հարձակվում է նրա երկրի վրա, ավերում, գերեվարում ու սպանում, կողոպտում ու թալանում

է Սասունը: Որոշ ժամանակ անց Մհերի տղան՝ Սասունցի Դավիթը, մենամարտի է դուրս գալիս իր կեսեղբայր Մելիքի դեմ՝ առաջնորդվելով իր ցեղի բարոյականության սկզբունքներով: Նախ՝ Դավիթը համաձայնում է, որ առաջինը հարվածներ հասցնի Մելիքը, երկրորդ՝ երբ հերթը հասնում իրեն, սկսում է զիջումներ անել, հօգուտ Մելիքի փոխել մենամարտի պայմանները, երրորդ՝ առաջին երկու հարվածները բախշում է Մելիքի մորը և քրոջը՝ չկարողանալով դիմանալ նրանց բերած բարոյական փաստարկներին, ավելի ճիշտ՝ իր խղճին՝ դրանով իսկ վտանգելով իր գործի հաջողությունը: Ի դեպ, միամիտ Դավիթը ‹‹բարոյական›› հարց է տալիս Իսմիլ խաթունին. **«Մարե, ինչի՞ դուն չուր հիմիկ, // Մելիքի զարկ կը գար մեջ իմ գլխուն, // Մեկ մ'էլ չասիր՝ Մելի՛ք, զարկ մի ինձի՛ բախշի»**[2]: Երկու բարոյականությունների բախման գագաթնակետ կարելի է համարել այն պահը, երբ Մելիքի մահվանից հետո Իսմիլ խաթունը դիմում է Դավթին.

-Դավի՛թ, սպանեցիր Մըսրա Մելքին,
Վնա՛ս չը կա, դու է՛լ իմ տղան ես:
Արի, էնոր կնիկ դու ա՛ռ,
Մըսրա թագավորություն մնա՛ քեզի,
Սասուն զաթի քո՛նն է:
Դավիթ ասաց.
-Ես մորե որ ծնվեր եմ՝ անարա՛տ եմ,
Ես իմ հալալ լեշ հարամ լեշերու չե՛մ խառնի[3]**:**

Այսինքն՝ մինչ Դավիթը մտածում է անարատ-արատավոր, հալալ-հարամ, արդար-անարդար, մեղավոր-անմեղ բարոյական հասկացություններով և հրաժարվում թագավորել Մըսրում և խրատներ է կարդում
Մըսրի՝ պահի տակ խեղճացած արյունռուշտ զորավարների գլխին, սգավոր, որդեկորույս, ի բնե երկրապահ-քաղաքագետ Իսմիլ խաթունը սառնասրտորեն, առանց ժամանակ կորցնելու մտածում է իր տերության ճակատագրի մասին:

[1] **‹‹Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս››, էջ 191:**
[2] **‹‹Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս››, էջ 336:**
[3] **Նույն տեղում, էջ 338:**

6 Երգիծանքը

Դեռ անտիկ ժամանակներից մարդկանց հետաքրքրել է ծիծաղը, երգիծանքը: Դրանում հնուց տեսել են կյանքի այլաբանական արտացոլումը: Այն եղել է մեղմասական յուրօրինակ ձև՝ խարազանելու ամենայն չարիքն ու անբարոն: Սակայն երգիծանքը չի բավարարվել իր ամենօրյա կիրառությամբ, այն նոր ոլորտներ ու «հորիզոններ է նվաճել», մասնավորապես՝ գրականություն, թատրոն, ֆիլմարտադրության, քանդակագործություն և այլն: Զարմանալի չէ, գրական-բանահյուսական ամբողջական ժանրեր ստեղծվել են հենց երգիծական միջոցներով: Ի՞նչ է գրականությունը, եթե ոչ մարդկային փոխհարաբերությունները թղթային արտացոլում: Գրականությունը կոչված է մարդուն (ընթերցողին) ծանոթացնել իր նմանի հոգեբանությանը, նրա սխալով սովորեցնել կյանքի ընկալումը: Բայց կյանքը մենք ընկալում ենք տարբեր կերպ: Այդ ընկալումներից մեկն էլ երգիծանքն է (ծիծաղը, հումորը): Երգիծանքը մարդկային արժևորման, գնահատման ձև է: Այժմ անդրադառնանք երգիծանքի դրսևորումներին «Սասունցի Դավիթ» էպոսում:

«Սասունցի Դավիթը» այն էպոսներից է, որոնց մեջ մեծ տեղ է տրվում երգիծանքին: Երգիծանքը սաստկության իր տարբեր աստիճաններով ուղեկցում է ողջ էպոսը: Այն հիանալի միջոց է դառնում էպիկական կերպարներ ու իրադարձություններ կերտելիս: Երգիծանքի նուրբ ու տեղին կիրառությունները ոչ միայն խոսքը էպոսում դարձնում են ոճականորեն հարուստ, այլև ամողջացնում են հեղինակ-պատմող-ասացողի վերաբերմունքը: Էպոսում երգիծողը ոչ թե ասացողն է (չնայած երբեմն ասացողն էլ կարող է հավելումներ անել), այլ ժողովուրդը: Սրանով արդեն մենք բնորոշում ենք էպոսի սուբյեկտիվ լինելը: Հետևապես այն ամենը, ինչ ներկայացվում է էպոսում, մեզ համար կարող է ուրախ կամ երգիծական լինել, սակայն նույն կերպ ու նույն խանդավառությամբ չէին ընկալի այն Սասնա հերոսների հակառակորդները: Պարզ է, որ ամենից առաջ և ամենից շատ երգիծվում են հենց «հակառակորդ ուժերը», բայց ասացող-ժողովուրդը հազվադեպ է բացահայտ երգիծում հակառակորդներին. նա գերադասում է դա անել մեր քաջերի առավելության առաջ նրանց տկարությունը ցուցադրելով: Հիշենք Սասունցի Դավթի ճյուղից այն դրվագը, երբ Սասնա ծուռը խաղում է երեխաների հետ: Էպոսում չի խոսվում այն մասին, թե այդ երեխաները թուլակազմ էին կամ բազկի ուժով տկար, սակայն միայն այն, որ Դավիթը միամտությամբ նրանց իր ուժին հավասար դասելով սկսում է վնասել, կոմիկական իրավիճակ է ստեղծում: Մանուկ Դավթի քաջությունը ստվերում է Մսըրա երեխաներին, սակայն հազվադեպ (մեր դիտարկումներով 2-3 անգամ) հանդիպում ենք բացահայտ ծաղրի հակառակորդների նկատմամբ: Հիշենք Կոզբադինի անհաջող հարկահանությունից հետո նրա Մսըր վերադառնալու դրվագը, երբ Մսրա կանայք սկսում են հեգնել նրա մեծաբերանությունը.

Կնկտիքըն ասին. -Տեսե՛ք մի, տեսեք,

Մեր Կոզբադին ինչպես կը գա լերան-լերան,

Բերնից կը թափե չորթընե թան:

....Այ, Կոզբադին, մեծաբերան...

Սակայն ժողովուրդը օբյեկտիվ է. նա երգիծում է նաև իր հերոսներին: Գրեթե յուրաքանչյուր Սասնա հերոս գոնե մեկ անգամ երգիծվում է իր միամտության կամ էլ վախկոտության (Վերգո) համար, սակայն ժողովուրդն այստեղ բարեհոգի ծիծաղով է վերաբերվում դրան: «Ծուռ սասուցիները» ևս հայտնվում են կոմիկական տարբեր իրավիճակներում: Բայց եթե մեր ծռերի դեպքում հումորն ընդգծում է նրանց որևէ դրական հատկանիշը (բացառությամբ Վերգոյի), ապա թշնամու դեպքում հումորը սաստկանում է, երբեմն վերածվում բացահայտ ծաղրի, ինչը հակառակորդին վերջնականապես ոչնչացնելու միտում ունի: Հետաքրքիր է, որ էպոսում ժողովուրդը փորձել է զերծ մնալ իշխանավորներին, թագավորներին երգիծելուց: Սա միջնադարյան տաբուի հետևանք է, որը, սակայն, ավելի ուշ շրջանի պատումներում ի չիք է դարձել: Բայց չնայած դրան՝ ժողովուրդ-հեղինակը ավելի քիչ է հեգնում պաշտոնյաներին, քան մյուս հերոսներին (սասնա հերոսներին չպետք է համարենք իշխանավոր. չնայած նրանք Սասունի տերուտիրականն են, այնուամենայնիվ ժողովուրդը նրանց նայում է որպես իրեն հավասարի: Սասնա ծռերի տարբեր պատումներում հանդիպում ենք ամենատարբեր երգիծական իրա վիճակների: Սակայն ամենից հաճախ այս երգիծանքը միջոց է ընդգծելու մեր հերոսների միամտությունը, նրանց հոգու մաքրությունը, երբեմն էլ սրանք արդյունք են մանկական չ արաճճիությունների: Այսպես. Պատումներից մեկում Ծովինարը փորձում է ապացուցել Խ ալիֆային, որ նրանից է հղիացել, ասում է.

-Ես քեզնից հըղացիր իմ.

Տու ուժեղ մարդ էր, կըգեր, էն կող կըկայներ՝

Ես քեզնից հըղացիր եմ [1]:

Դեղձուն-Ծամը նամակ է գրում Սանասարին, որտեղ երկու անգամ բարևում է Սանասարին և մեկ անգամ Բաղդասարին: Բաղդասարը սրանից նեղանում է ու կարծում է, թե եղբայրը վաղուց մտադիր էր Դեղձուն-Ծամի հետ ամուսնանալ, սակայն իրեն չէր ասում: Բայց ամեն շատ նա նեղանում է, որ իրեն մի բարև է ուղարկվել, եղբորը՝ երկու.

Ասաց. «Էս ի՛նչ բան է, էրկու դիր՝

Բարև գրե Սանասարին, մեկ դիր՝ ինձի»:

Պատումներից մեկում, երբ Սասունում սով է, հաց չկա, եղածն էլ թանկացած է, Մհերը հարցնում է հորը՝ Սանասարին.

Թե.-Հորի՞ թանգուտեն կ՛ընկնի:

Հեր լե ըսեց թե.- Առուծ մի փարդա եղի ճամփու վրեն,

Ճամփորդ կտրեց, երթցող-գալացող չկա,

Ըսեց.- Իմա՞լ առուծ. առուծն ի՞նչ ա, ըսեց:

Ըսեց.-Ջանավար է, մարդ կ՛ուտե:

Ըսեց.-Հեռվա՛նց մարդ կուտե, չէ՞ մոտենաս՝ նոր[2]:

Երգիծական դրվագների մի ամբողջ շղթա է Դավթի հովիվ լինելու ժամանակահատվածը: Առաջին անգամ իրեն վստահած գառներին ու ուլերին աչքաթող անելուց հետո նա ընկնում է նապաստակների ու աղվեսների հետևից՝ դրանց ուլեր կարծելով, և վերջում էլ դժգոհում է, թե ինչու են այդ ուլերը փախչում իրենից.

Ընկավ հետև նապաստակին, էն չալ ուլ էր:

Կուզ, մ'էլ գընաց, աղվե՛ս մ'էլ փախավ,

Դավիթ է՛լ ասաց.

— Օ՛հ, էն ուլեր ինչպե՞ս կը փախնեն:

Այսպիսով. եթե ուսումնասիրենք «Սասնա ծռերի» խոսքարվեստը երգիծանքի խոշորացույցի ներքո, կարող ենք փաստել, որ այն յուրօրինակ աշխարհ է՝ համեմված երգիծանքի տարբեր աստիճաններով: Ժողովուրդը իր հերոսներին կերտելիս չէր կարող հաշվի չառնել մի փաստ. եթե ուզում ես, որ կերպարը հոգեհարազատ լինի ունկնդիրներին, պետք է նշես նրա և՛ առավելությունները, և՛ թերությունները: Իսկ դրա լավագույն տարբերակը, որի դեպքում մենք չենք հիասթափի հերոսներից, երգիծանքն է, որը մեղմում է վերաբերմունքը, ստիպում ընթերցողունկնդրին նայել հերոսներին՝ որպես հավասարը հավասարին:

[1]Սասնա Ծռեր, հատոր Գ. էջ 26:

[2]Սասնա Ծռեր, հ. 2, էջ 58:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական հերոսական էպոսն ունի բացառիկ հարուստ գաղափարախոսություն: Այդ գաղափարախոսության ողջ բովանդակությունը մնում է որպես մշտական պահանջ՝ ուղղված ոչ միայն հայ ժողովրդին, այլև համայն մարդկությանը:
Հայ ազգային էպոսի յուրացումը պահանջում է բնագրի բարբառային բառերի իմացություն, որոնք այնքան էլ մեծ քանակ չեն կազմում, և դրանց մի մասը դեռ պահպանված է այսօրվա խոսակցական հայերենում:
«Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուշադրության կենտրոնում պահել ողջ դասարանը, անցկացնել աշակերտակենտրոն դասեր: Դասախոսությունը և դասը պարտադիր է վարել հետաքրքիր, աշխույժ. այդ հնարավորությունն ընձեռում է գրական այս հուշարձանի հետաքրքրաշարժ բովանդակությունը: Աշակերտը պորտալարով կապված է էպոսին և պիտի իմանա, որ հենց ի՛նքն է այն Դավիթը, Մհերը, Ծովինարը, Արմաղանը, Դեղձուն Ծամը, Խանդութը, Սանասարը, Ձենով Օհանը, որի հետ հույսեր է կապում իր ժողովուրդը: Ուսուցչի դերը այստեղ շատ մեծ է. պետք է արթնացնել արյան մեջ քնած գենը, ոգեղենություն ներարկել, որ նրա մեջ զարթնի Սասնա Դավիթը՝ իր Թուր կեծակիով: Այսօր նեխած մեր դարում, երբ կորչում է ամեն լուսավոր բան, երբ փորձում են ժողովուրդներին դարձնել անդեմ ու անսեռ՝ ջնջելով նրա հիշողությունը, երբ ներմուծվում են կեղծ օրակարգեր, դժվար է գոյատևել, առավել դժվար պահպանել սեփական եսը և դիմագիծը: Այսօր մեր էպոսը պիտի լինի յուրաքանչյուր հայի (տղա, թե՝ աղջիկ), գաղափարաբանությունը, խորհրդանիշը և իդեալը: Պիտի արգելվեն օտար վայրենակերպ հերոսներով ոչինչ չասող մուլտֆիլմերի ներմուծումը Հայաստան: Այդ առումով փառք ու պատիվ «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմի ստեղծողներին, որոնք նոր շունչ տվին հայ մանչուկի օտարացող հոգուն և նոր ոգևորությամբ զարկ տվին նրա եռացող արյան մեջ քնած բջջին: Երեխան պիտի Սուրբ գրքի պես անգիր ու գոց իմանա էպոսը, նրա գաղափարը, բերած արժեքները և թաքուն - ակնհայտ սպասելիքները… Հայ մանուկը, պատանին, մարդը պիտի դեռ դպրոցական նստարանից կերտի էպոսից ծնունդ առած իր իդեալ-կերպարը և ձգտի հասնել դրան, ինչպես միստիկ Նարեկացին՝ աստվածային կերպարին:
Այս ամենին հասնելու համար նախ ուսուցիչը պիտի ճանաչի ու սիրի էպոսը, իր համար բացահայտի նրա բոլոր շերտերը, անգամ՝ չբացահայտվածը…
Էպոսի՝ որպես հայ ժողովրդի հավաքական կերպարի, զգացումների, հույզերի, ցանկությունների, երազանքների շնորհիվ է, որ կարելի է հասկանալ, թե ի վերջո ով ենք մենք և ինչ ենք ուզում: Հասկանալ, որ թուլամորթությունը, բղջախոհությունը, ստորությունը, ստրկամտությունը, շողոքորթությունը, դավաճանությունը, ծուլությունը…. և հայ ժողովուրդը անհամատեղելի են: Հային զարդարող գծերը ***ՄԱՐԴԱՄԻՐՈՒԹՅՈՒՆԸ և ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ*** են… Հայը այն հազվագյուտ ազգերից է, որ ընկել է, բայց նորից **ՀԱՎԱՏԱՑԵԼ է իր վերընձյուղվելուն…**
Եվ իր հավատի համար միշտ ծաղկել է…

ԴԱՌՆԱՄ, ԶՕՂՈՐՄԻ ՏԻ ՏԱՄ ՄԵՐ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ,

ՀԱԶԱՐ ՕՂՈՐՄԻ...

ԱՄԵՆ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ (Հոդվածների ժողովածու՝ նվիրված համահավաք բնագրի հրատարակման 80-ամյակին) Երևան – 2019 (https://aspu.am/website/images/files/afd062e9.pdf)
2. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%BA%D5%B8%D5%BD
3. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1_%D5%AE%D5%BC%D5%A5%D6%80#/media/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%AF%D5%A5%D6%80:Sasuntsi_David.jpg
4. «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» հայկական ժողովրդական էպոս, Երևան, «Արևիկ», 1989
5. http://www.ysu.am/files/01S_Zakaryan_1.pdf
6. https://www.hayagitaran.am/2014/03/id-4244.html
7. https://archiveranyan.blogspot.com/2017/05/blog-post_27.html
8. http://publications.ysu.am/wp-content/uploads/2018/12/Manucharyan.pdf
9. https://kachatur.wordpress.com/2013/11/02/%D5%BD%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1-%D5%AE%D5%BC%D5%A5%D6%80/
10. https://www.google.com/search?q=%D5%8D%D5%A1%D5%BD%D5%B8%D6%82%D5%B6%D6%81%D5%AB+%D4%B4%D5%A1%D5%BE%D5%AB%D5%A9&sxsrf=ALiCzsb_rZNRxbSfcBR5fRWh35hpx2QWbg:1666771347165&source=lnms&tbm=isch&sa=X&ved=2ahUKEwjr58aQt_36AhWASvEDHQIuDf0Q_AUoAXoECAIQAw&biw=1440&bih=737

Բովանդակություն

1. Ներածություն---------- 2-4
2. Մեր էպոսն ու ազգային արժեքները----------5-6
3. Հայրենասիրությունը---------- 7
4. Ազատասիրությունը ----------8
5. Աշխատասիրությունը----------9
6. Մարդասիրությունը----------10
7. Ասպետականություն- վեհանձնությունը: Բարոյական արժեքներ--------11-12
8. Երգիծանքը----------13-15
9. Եզրակացություն ----------16-17
10. Գրականություն---------- 18
11. Բովանդակություն----------19